ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Հասարակական աշխարհագրության ճյուղերից է.**

1) երկրագրությունը
2) ջրաբանությունը
3) հնեաշխարհագրությունը
4) կլիմայագիտությունը

2 **Երևանի հեռավորությունը հարավային բևեռային շրջագծից կլինի.**

1) 106,5°
2) 116,5°
3) 86,5°
4) 96,5°

3 **Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:**

1) ազիմուտային
2) կոնային
3) հասարակածային
4) գլանային



նկար 1.

4 **Ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Հունիսի 22-ին բևեռային ցերեկ լինում է հարավային բևեռային շրջագծի վրա:
2) Մարտի 21-ին առավելագույն ջերմություն ստանում են հասարակածային լայնությունները
3) Երկրագնդի առանցքի թեքությունն իր պտտման ուղեծրի հարթության նկատմամբ կազմում է 66,5°:
4) Արեգակի շուրջը երկրագնդի պտտման երկարությունը 940 մլն կմ է:

5 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Քարտեզում հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է իզոթերմ:
2) Հարաբերական բարձրությունը Երկրի մակերևույթի որևէ կետի բարձրությունն է՝ հաշված ծովի մակարդակից:
3) Աղավաղումներն աշխարհագրական քարտեզում ավելի մեծ են, քան հատակագծում:
4) Անվանական մասշտաբը պատկերվում է կոտորակի տեսքով:

6 **Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 6 սմ է, իսկ իրականում՝ 48 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.**

1) 1: 8 000 000
2) 1: 80 000 000
3) 1: 80 000
4) 1: 800 000

7 **Ո՞ր դարաշրջանում է երկրակեղևը կրել ալպյան ծալքավորության ազդեցությունը:**

1) Պրոտերոզոյան
2) Պալեոզոյան
3) Մեզոզոյան
4) Կայնոզոյան

8 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հարթավայրեր առաջանում են ջրիկ լավայի արտավիժումների հետևանքով:
2) Ծալքաբեկորավոր լեռներում ծալքերը և բեկորներն առաջանում են տեկտոնական շարժումների բացակայության պատճառով:
3) Երկրակեղևի օվկիանոսային տիպում բազալտային շերտը բացակայում է:
4) Ուժեղ երկրաշարժի ժամանակ երկրակեղևի ամբողջ տեղամասերի թեկուզ մի քանի մետրով կտրուկ իջեցումը կամ բարձրացումը բացառվում է:

9 **Մթնոլորտում ո՞ր բարձրություններում է տարածվում օզոնի շերտը.**

1) 35 – 40 կմ
2) 40 – 45 կմ
3) 25 - 30 կմ
4) 30 – 35 կմ

10 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:
2) Քամիներն առաջացնում են ցունամիներ:
3) Քամու միջոցով նավարկում են առագաստանավերը:
4) Քամու միջոցով արտադրվում է էլեկտրաէներգիա:

11 **Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը պատկերող նկարում ո՞ր տառով է նշված մայրցամաքային ծանծաղուտը.**

1) Գ
2) Դ
3) Ա
4) Բ



12 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Գրենլանդիայում և Անտարկտիդայում լայն տարածում ունեն լեռնահովտային սառցադաշտերը:
2) Գետի ջրի մակարդակի տատանումը կոչվում է գետի հոսք:
3) Ինչքան մեծ լինեն գետի անկումն ու թեքությունը, այնքան մեծ կլինի նրա էներգետիկ կարողությունը:
4) Կասպից և Արալյան լճերն ունեն տեկտոնական ծագում:

13 **Բնութագրումով որոշել բնական զոնան.**

Այս բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ, տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունի Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Ո՞ր բնական զոնան է.

1) տունդրա
2) անապատ
3) տափաստան
4) սավաննա

14 **Բարեխառն գոտու փշատերև անտառները հիմնականում ո՞ր հողերի վրա են տարածվում.**

1) կարմրադեղին
2) պոդզոլային
3) կարմրագորշ
4) դարչնագույն

15 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Անտարկտիդայի հզոր սառցադաշտերի տակ կան լեռնաշղթաներ, սարահարթեր, հսկայական գոգավորություններ և նույնիսկ իջվածքներ:
2) Անտարկտիկայում չկան գործող հրաբուխներ, և չեն լինում երկրաշարժեր:
3) Անտարկտիդայի հիմքում ընկած է Անտարկտիկական հնագույն պլատֆորմը:
4) Անտարկտիդայի արևմուտքում ձգվում է Անտարկտիկական Անդերը:

16 **Ո՞ր զույգի կղզիներն են նույն ծովում.**

1) Հոկայդո և Թայվան
2) Սարդինիա և Կորսիկա
3) Հոնսյու և Կալիմանտան
4) Սուլավեսի և Ճամայկա

17 **Հարավային Ամերիկայի ամենաբարձր և ամենացածր կետերի բարձրությունների տարբերությունը կազմում է.**

1) 7000 մ
2) 7100 մ
3) 6800 մ
4) 6900 մ

18 **Ընտրել Հարավային Ամերիկայի բնական զոնաների տեղական անվանումների և բնական զոնայի կամ այն ընդգրկող տարածքի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

ա. պարամոս	1. խոնավ հասարակածային անտառներ
բ. պամպա	2. բարձրալեռնային մարգագետինները Անդերի լեռնաշղթայում
գ. սելվաս	3. սավաննաները՝ Բրազիլական սարահարթում
դ. կամպոս	4. մերձարևադարձային տափաստանները Լա-Պլատայի դաշտավայրի հարավում

1) ա–3, բ–1, գ–4, դ–2
2) ա–2, բ–1, գ–4, դ–3
3) ա–2, բ–4, գ–1, դ–3
4) ա–3, բ–4, գ–1, դ–2

19 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Կանադական կղզեխմբում ու Գրենլանդիայում առավելապես տարածվում է սառցային զոնան:
2) Հյուսիսային Ամերիկայում չկան անապատներ և կիսաանապատներ:
3) Կենտրոնական Ամերիկայում, Կարիբյան ծովի կղզիներում տարածվում են խոնավ արևադարձային անտառներ և սավաններ:
4) Հյուսիսային Ամերիկայի տունդրայի զոնայում տիրապետող են մամուռներն ու քարաքոսները:

20 **Ատլանտյան օվկիանոս թափվող գետ է.**

1) Կոլորադոն
2) Կոլումբիան
3) Մակենզին
4) Միսիսիպին

21 **Ո՞ր շարքում *սխալ* կա.**

1) Զամբեզի, Նեղոս, Օրանժ—գետեր
2) Դրակոնյան, Կապի, Ատլասի—լեռներ
3) Նամիբ, Կալահարի, Սահարա—անապատներ
4) Տանգանիկա, Նյասա, Շարի—լճեր

22 **Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հևեան:
2) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
3) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
4) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:

23 **Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:
2) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:
3) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:
4) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:

24 **Ո՞ր երկիրն է եղել ԽՍՀՄ–ի կազմում.**

1) Վիետնամը
2) Լեհաստանը
3) Մոնղոլիան
4) Էստոնիան

25 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Զարգացող երկրներում բարձր են ուրբանիզացման աճի տեմպերը:
2) Մեգալոպոլիսները խմբային տարաբնակեցման պարզ ձևեր են:
3) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:
4) Քրիստոնեությունը և բուդդայականությունը ազգային կրոններ են:

26 **Երկրի բնակչության թիվը 8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 160 մարդ/կմ^2: Երկրի տարածքը կլինի.**

1) 50 հազ. կմ^2
2) 80 հազ. կմ^2
3) 20 հազ. կմ^2
4) 40 հազ. կմ^2

27 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Եգիպտացորենի հայրենիքը Եգիպտոսն է:
2) Վուշը ցրտադիմացկուն և խոնավասեր բույս է, մշակվում է բարեխառն գոտու հյուսիսային լայնություններում:
3) Թեյի հայրենիքը Չինաստանն է:
4) Բրինձը հացահատիկների շարքում ամենաջերմասերն ու խոնավասերն է:

28 **Արտադրանքի ծավալով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.**

1) մետաղաձուլությունը
2) թեթև արդյունաբերությունը
3) մեքենաշինությունը
4) էլեկտրաէներգետիկան

29 **Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Թուրքիայի տնտեսության առաջատար ճյուղը նավթարդյունահանումն է:
2) Իրանը և Իրաքը փյունիկյան արմավի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներն են:
3) Եմենում բացակայում է երկաթուղին
4) Տարածաշրջանի տնտեսապես ամենազարգացած պետությունը Իսրայելն է:

30 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Այս ասիական պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աճեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով:

1) Վրաստան
2) Լիբանան
3) Ադրբեջան
4) Հորդանան

31 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա մեծ ազդեցություն ունի էկոլոգիական գործոնը:
2) Քիմիական արդյունաբերությունը գերազանցապես տեղաբաշխված է զարգացող երկրներում:
3) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա ազդում է ջրատարության գործոնը:
4) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման գործում մեծ է կոմբինացման (համակցման) դերը:

քարտեզ 1

32 **Ո՞ր պետությունն է քարտեզ 1– ում նշված Դ տառով.**

1) Հունգարիա
2) Մոլդովա
3) Բուլղարիա
4) Ռումինիա

33 **Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1– ում նշված Ը տառով.**

1) Ստոկհոլմ
2) Ռիգա
3) Օսլո
4) Հելսինկի

34 **Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
2) Թեթև արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հաշվին:
3) Տրանսպորտային ցանցը խիտ է:
4) Բնակչության միջին խտությունը բարձր է:

35 **Մշակաբույսերից որի՞ մշակությամբ է Չինաստանն աշխարհում գրավում առաջին տեղը.**

1) սուրճի
2) արևածաղկի
3) կակաոյի
4) բամբակենու

36 **Աֆրիկայի ո՞ր երկրները ելք *չունեն* դեպի ծով.**

1) Գանա և Մավրիտանիա
2) Մոզամբիկ և Տանզանիա
3) Նիգեր և Ռուանդա
4) Թունիս և Մարոկկո

37 **Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Կանբերան է:
2) Ստորերկրյա արտեզյան ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:
3) Աշխարհի ամենախիտ բնակեցված մայրցամաքներից է:
4) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:

38 **Ամերիկայի Միացյալ Նահանգներին (ԱՄՆ) են պատկանում.**

1) Հավայան կղզիները
2) Կանարյան կղզիները
3) Ֆոլկլենդյան կղզիները
4) Սեյշելյան կղզիները

39 **Լատինական Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Շաքարի արտադրության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է:
2) Խոշորագույն նավահանգիստներից են Բուենոս Այրեսն ու Ռիո դե Ժանեյրոն:
3) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկիր է Չիլին:
4) Պարանա գետի վրա է կառուցված Իտայպու խոշորագույն ջրէկը:

40 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Կանսկ–Աչինսկի ավազաններում:
2) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կոլա թերակղզում:
3) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:
4) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:

41 **Ի՞նչ ծագման լճեր *չկան* Հայկական լեռնաշխարհում.**

1) տեկտոնահրաբխային
2) փլվածքային
3) սառցադաշտային
4) մնացորդային

42 **ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) ո՞ր վարչական շրջանը և կենտրոնը համանուն *չեն.***

1) Քաշաթաղի
2) Հադրութի
3) Մարտակերտի
4) Ասկերանի



քարտեզ 2

43 **Քարտեզ 2–ում Վեղի գետը ո՞ր տառով է նշված.**

1) Գ
2) Դ
3) Ա
4) Բ

44 **Քարտեզ 2–ում Վաղարշապատ քաղաքը ո՞ր տառով է նշված.**

1) Է
2) Ը
3) Ե
4) Զ

45 **ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
2) Ռուսները հիմնականում բնակվում են Վայոց ձորի մարզում:
3) Թվաքանակով երկրորդ ազգը ասորիներն են:
4) Եզդիները հիմնականում բնակվում են Սյունիքի մարզում:

46 **ՀՀ–ում ուրբանիզացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզն է.**

1) Արմավիրը
2) Շիրակը
3) Սյունիքը
4) Արարատը

47 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
2) Ալյումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
3) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
4) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է մոլիբդենի արտադրությունը:

48 **Ո՞ր մարզում չկա երկաթուղային կայարան.**

1) Շիրակ
2) Լոռի
3) Գեղարքունիք
4) Վայոց ձոր

49 **Արագածոտնի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով:
2) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:
3) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:
4) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:

50 **Կոտայքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) պտղաբուծությունը
2) բանջարեղենի մշակությունը
3) ծխախոտի մշակությունը
4) հացահատիկի մշակությունը

51 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Բուսականությունը մասնակցում է նյութերի և էներգիայի համամոլորակային շրջապտույտին:
2) Լուսասինթեզի ժամանակ բույսերը կլանում են թթվածին և արտանետում ածխաթթու գազ:
3) Անտառներն ունեն ջրապաշտպան, հողապաշտպան, դաշտապաշտպան, կլիմայաստեղծ նշանակություն:
4) Անտառների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում է հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:

52 **Օդային ավազանի առավել մեծ տեխնածին աղտոտվածություն ունեցող երկիր է.**

1) Ճապոնիան
2) Ավստրալիան
3) Բրազիլիան
4) Պորտուգալիան

53 **Հետևյալներից ո՞րը հողաբարելավման միջոցառում *չէ*:**

1) անտառապատում
2) կլիմայավարժեցում
3) ոռոգում
4) քարամաքրում

54 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ջերմոցային էֆեկտի ուժեղացման հետևանքով բարձրանում է երկրագնդի միջին ջերմաստիճանը:
2) Հողերի վատթարացման պատճառ է արոտավայրերի գերարածեցումը:
3) Արգելոցը հատուկ պահպանվող տարածք է, որտեղ ամբողջությամբ արգելված է մարդու արտադրական գործունեությունը:
4) Բուսական և կենդանական աշխարհը շատ աղքատ է երկրագնդի մերձարևադարձային գոտիներում:

55 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Մարդկային զարգացման համաթվի հաշվարկման գլխավոր բաղադրիչ է տվյալ պետության քաղաքական իրավիճակը:
2) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
3) Թույլ զարգացած երկրներին հատկապես բնորոշ է պարենային հիմնախնդիրը:
4) Համաշխարհային օվկիանոսը եկրագնդի մասշտաբով կլիմայի կարգավորիչ է:

56 **Գրել այն ապարների համարները, որոնք ունեն օրգանական նստվածքային ծագում.**

1) ավազ
2) խարամ
3) օբսիդիան
4) տուֆ
5) կրաքար
6) խճաքար
7) տորֆ
8) գնեյս

57 **Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնական ծագում ունեցող լճերի համարները.**

1) Բայկալ
2) Մեծ արջի
3) Չադ
4) Արալյան
5) Տանգանիկա
6) Վետերն
7) Աթաբասկա
8) Նյասա

58 **Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

1) Բենգելյան
2) Լաբրադորյան
3) Կալիֆոռնիական
4) Ֆոլկլենդյան
5) Կանարյան
6) Սոմալիի
7) Օյա Սիո
8) Պերուական

59 **Գրել այն լեզուների համարները, որոնք չեն մտնում սլավոնական լեզվախմբի մեջ.**

1) լեհերեն
2) սերբերեն
3) ռուսերեն
4) բուլղարերեն
5) չեխերեն
6) սլովակերեն
7) շվեդերեն
8) էստոներեն

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.**

1) Հնդկաստան
2) Չինաստան
3) Գերմանիա
4) Իրան
5) Թուրքիա
6) Ինդոնեզիա
7) Պակիստան
8) Ճապոնիա

61 **Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք մասնագիտացված են խաղողագործության մեջ.**

1) Սևանի ավազան
2) Սյունիքի բարձրվանդակ
3) Շիրակի դաշտ
4) Մասրիկի դաշտ
5) Կոտայքի սարավանդ
6) Արարատյան դաշտ
7) Լոռվա սարահարթ
8) Արփայի հովիտ

62 **Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել ըստ դրանց վտակների վրա գտնվող ջրվեժների հետևյալ հաջորդականությամբ՝ Թորթումի, Շաքիի, Թռչկանի.**

1) Որոտան
2) Ճորոխ
3) Փամբակ

63 **Տրված հարթավայրերը դասավորել բարձրության աճման կարգով.**

1) Մերձկասպյան
2) Միջինռուսական
3) Միջագետքի
4) Շիրակի

(64-65). Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 340 մմ է, օդի ջերմաստիճանը՝ –6°C, իսկ ստորոտին՝ +12°C (հաշվարկը կատարել 6°–ով).

| 64 | Որոշել լեռան հարաբերական բարձրությունը: |

| 65 | Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտում: |

(66-67) Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 800 մարդ: Եկածների թիվը 2 000 մարդ է, մեկնածների թիվը՝ 1500 մարդ.

| 66 | Որոշել միգրացիայի մնացորդը: |

| 67 | Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո: |

| 68 | Երկրի նավթի պաշարները կազմում են 2,4 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 80 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսապահովվածությունը: |

69 **Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
2) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:
3) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
4) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:
5) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:
6) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:

70 **ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը:
2) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը:
3) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
4) Կլիման բարեխառն լեռնային է:
5) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
6) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը: